

*Հաստատված է
Հայաստանի Հանրապետության պետական կառավարման
ակադեմիայի գիտական խորհրդի 2014 թվականի
սեպտեմբերի 27 -ի նիստում (արձանագրություն N 119)*

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը նախատեսված է կարգավորելու Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում (այսուհետ՝ Ակադեմիա) քննությունների և ստուգարքների արդյունքների հետ կապված բողոքների (դիմումների) ներկայացման և քննարկման հարցերը:

2. Ամփոփիչ ատեստավորման (ամփոփիչ քննություն և մագիստրոսական թեզի պաշտպանություն) արդյունքի բողոքարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 1997 թվականի մարտի 3-ի N 13-ՔՆ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1197-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի» 33-րդ կետի:

3. Սույն կարգի դրույթները տարածվում են Ակադեմիայում կրթական բոլոր ծրագրերով ուսումնառող սովորողների վրա:

4. Յուրաքանչյուր սովորող կարող է բողոքարկել արդյունքները, եթե, իր կարծիքով, խախտվել է քննությունների (ստուգարքների) անցկացման ընթացակարգը, ինչպես նաև կարող է վիճարկել քննության գնահատականը:

5. Սովորողի բողոքը (դիմումը) հիմք է գնահատման արդյունքների վերանայման և, անհրաժեշտության դեպքում, սույն կարգով սահմանված կարգով վերագնահատում իրականացնելու համար:

II. ԲՈՂՈՔՆԵՐԻ (ԴԻՄՈՒՄՆԵՐԻ) ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Սովորողը կարող է բանավոր քննությունների և ստուգարքների արդյունքները բողոքարկել Ակադեմիայի ռեկտորին՝ արդյունքները հրապարակելու պահից մեկ ժամվա ընթացքում, իսկ գրավոր քննությունների և ստուգարքների դեպքում՝ արդյունքները հրապարակվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

7. Քննության (ստուգարքի) ընթացակարգը կամ գնահատականը բողոքարկելիս սովորողը հստակ նշում է բողոքի հիմքում ընկած հանգամանքները և իր հիմնավորումները:

8. Սովորողը բողոքը (դիմումը) ներկայացնում է Ակադեմիայի ռեկտորին՝ նշելով՝

1) իր անունը, ազգանունը, մասնագիտությունը, կուրսը, ուսուցման ձևը,

2) բնակության հասցեն, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը,

3) ներկայացվող պահանջը (դիմումի առարկան) և հիմնավորումները,

4) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք առկա են),

5) դիմումը գրելու տարին, ամիսը և ամսաթիվը,

6) դիմողի ստորագրությունը:

9. Սույն կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետում նշված հիմնավորումներն են՝

1) կազմողների կողմից սխալ ձևակերպված հարցեր, խնդիրներ և առաջադրանքներ, առարկայի շրջանակից դուրս հարցադրումներ,

2) քննող դասախոսի կողմից Ակադեմիայում սահմանված քննությունների (ստուգարքների) կազմակերպման գործընթացի խախտում,

3) գնահատման մեթոդաբանության խախտում,

4) հանգամանքներ, որոնք խանգարել են օբյեկտիվ գնահատելու աշխատանքը:

10. Որպես բողոք քննարկման են ընդունվում սույն կարգի 8-րդ կետով սահմանված պահանջներին բավարարող գրավոր դիմումները:

11. Ներկայացված բողոքը (դիմումը) գրանցվում է և դրան տրվում է մտից համար:

12. Սույն կարգի 8-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում բողոքը (դիմումը) ներկայացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացվում է դիմողին և մերժվում նրա՝ քննության (ստուգարքի) գնահատման արդյունքները վերանայելու մասին դիմումը:

13. Սույն կարգի 8-րդ կետի պահանջներին համապատասխանելու դեպքում Ակադեմիայի ռեկտորը երկու աշխատանքային օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքարկման հանձնաժողովի առնվազն հինգ անդամներից բաղկացած բողոքարկման հանձնաժողով ստեղծելու և տվյալ բողոքի (դիմումի) քննարկման ժամկետների մասին:

Գրավոր աշխատանքի կրկնակի ստուգման կամ լրացուցիչ քննության (ստուգարքի) գործընթացն անցկացվում է բողոքը (դիմումը) ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

14. Բողոքարկման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, ուսումնամեթոդական վարչության պետը, համապատասխան ամբիոնի վարիչը, տվյալ մասնագիտությամբ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները:

15. Գրավոր աշխատանքի վերանայման կամ լրացուցիչ քննության (ստուգարքի) տեղի և ժամանակի մասին բողոք (դիմում) ներկայացրած անձը ծանուցվում է՝ գրավոր աշխատանքի վերանայման կամ նոր քննության (ստուգարքի) անցկացման օրվանից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ:

16. Բողոքարկողի (դիմողի) խնդրանքով բողոքը (դիմումը) կարող է հետ կանչվել դրա քննարկման ցանկացած փուլում՝ մինչև բողոքարկման հանձնաժողովի կողմից գրավոր աշխատանքի վերանայումը կամ լրացուցիչ քննության (ստուգարքի) անցկացումը: Այս դեպքում բողոքի կամ դիմումի քննարկումը և դրանցով վարվող գործավարությունը դադարեցվում է, ինչի մասին ծանուցվում են բողոքի (դիմումի) քննարկման բոլոր հնարավոր մասնակիցները:

III. ԲՈՂՈՔՆԵՐԻ (ԴԻՄՈՒՄՆԵՐԻ) ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

17. Բողոքը (դիմումը) նախապես քննարկվում է բողոքարկման հանձնաժողովի կողմից:

18. Բողոքի (դիմումի) նախնական քննարկման ընթացքում բողոքարկման հանձնաժողովն իրավունք ունի նաև դիտելու (լսելու) սովորողի պատասխանի տեսագրությունը:

Այս դեպքում ձայնագրությունը լսելուց հետո բողոքարկման հանձնաժողովը կարող է որոշել.

1) լրացուցիչ բանավոր քննություն (ստուգարք) չանցկացնել և որոշում կայացնել ձայնագրության հիման վրա.

2) անցկացնել լրացուցիչ բանավոր քննություն (ստուգարք):

19. Եթե սովորողը քննությունը (ստուգարքը) հանձնել է գրավոր, ապա այս դեպքում կրկնակի քննություն (ստուգարք) չի անցկացվում:

20. Բողոքարկման հանձնաժողովը բողոքարկված գրավոր աշխատանքի համապատասխանությունը ստուգելիս առաջնորդվում է Ակադեմիայի կողմից սահմանված գնահատման չափանիշներով:

21. Աշխատանքի կրկնակի ստուգման և գնահատման արդյունքում նախկին գնահատականը կարող է մնալ անփոփոխ, բարձրացվել կամ իջեցվել:

22. Սովորողն իրավունք ունի դիմելու և բողոքարկման հանձնաժողովի անդամներից ստանալու իր գնահատականի վերաբերյալ լրացուցիչ բանավոր պարզաբանումներ:

23. Սովորողն իրավունք ունի ստանալու գրավոր քննության (ստուգարքի) ստուգված աշխատանքի պատճենը:

24. Լրացուցիչ բանավոր քննության (ստուգարք) անցկացման դեպքում բողոքարկող հանձնաժողովը սովորողի գիտելիքները, հմտություններն ու կարողությունները ստուգում է տվյալ առարկայի ծրագրի ամբողջ ծավալով:

25. Բանավոր լրացուցիչ քննության (ստուգարքի) անցկացման արդյունքում նախկին գնահատականը կարող է մնալ անփոփոխ, բարձրացվել կամ իջեցվել:

26. Առանց հարգելի պատճառների բողոքարկողի (դիմող) չներկայանալու դեպքում բողոքարկման հանձնաժողովը մերժում է բողոքը (դիմում):

27. Բողոքարկման հանձնաժողովի՝ բողոքարկման արդյունքների կայացրած որոշումները պետք է հիմնավորվեն:

28. Բողոքարկման արդյունքներն ամփոփվում են բողոքարկման հանձնաժողովի կողմից, ինչի մասին կազմվում է արձանագրություն:

29. Բողոքարկման հանձնաժողովի որոշումը վերջնական է:

30. Բողոք (դիմում) ներկայացրած անձը բողոքարկման հանձնաժողովի որոշման վերաբերյալ ծանուցվում է այն ընդունելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում: